

ԵԿԵՂԵՑԻՈՑ-ՍՐԱՀԻ ԾԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԱԻ
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՑ

"Ամէն մէկը ինչպէս որ իր սրտովը կը յօժարի,
թող ԱՅՆՊէՍ ՏԱՅ- չէ թէ տրտմութեամբ կամ ըս-
տիպմամբ- ինչու որ Աստուած յօժարակամ տուո-
ղը կը սիրէ:"

Բ-Կորնթացիս 9:7

Հոգեշնորհ Հայր Սուրբ եւ
Յարգելի Բարեկամներ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Այս օր արեւի նման պայծառ կերեւայ՝ որ թէ Ռիչմընտի եւ թէ Հօփվելի Հայուօթի-
նը անմիջական կարիքը ունի Եկեղեցի մը, Ազգային Տուն մը Սրահ մը ունենալու:
Ճիշդ է թէ մեզմէ շատեր տասնեակ տարիներ խորհեր, խօսեր, երազեր եւ բազմացեր
են Ազգային Տուն մը, Եկեղեցի մը եւ կամ Սրահ ունենալ, սակայն իրենց այդ իղ-
ձերն ու փափաքները իրականացնելու համար՝ պայմաններու եւ ժամանակներու բերու-
մով՝ այդ ուղղութեամբ ոչ փորձ կատարեր են եւ ոչ ալ դրական քայլ առեր:
Միայն վերջին 6-7 տարուայ ընթացքին ստեղծուէր են զանազան Ծինութեան Յանձնա-
խումբեր՝ սակայն առանց որեւէ աշխատանքի արդիւնք ցոյց տալու՝ իրենց սաղմին
մէջ ոչնչացեր են: Ռիչմընտի եւ Հօփվելի Հայ գաղութներու պատմութեան մէջ,
առաջին անգամը ըլլալով այդ երազներու, իղձերու եւ փափաքներու թանձրացեալ սա-
ռոյցը կոտորեց եւ Եկեղեցւոյ-Սրահի Ծինութեան համար նախաքայլը առաւ՝ Յունիս
12, 1949-ին՝ Պաշտօնապէս բանալով Եկեղեցւոյ-Սրահի Ծինութեան Հանգանակութիւնը:

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Երրորդ անգամը ըլլալով՝ Յունվար 16, 1949-ին, Հայաստանեաց Եկեղեցւոյ Հոգա-
բարձական ընտրութեան անդամական ժողովի կողմէ ընտրուեցաւ Յանձնախումբս հե-
տեւեալ անձնաւորութիւններէ- Պր- Նշան Շահինեան, Պր- Մանուէլ Տէրտէրեան,
Պր- Պաղտասար Մանկիկեան, Պր- Ճան Նահապետեան եւ Վահան Ղազարեան:
Յանձնախումբս իր ընտրութենէն անմիջապէս վերջ ընթացիկ յաջորդական ժողովնե-
րուն Օրակարգի գլխաւոր հարց դարձուց՝

Ա- Հին հողի կից գտնուած Հողը ~~գնելու~~ յարմար գումարով մը
գնելու-

Բ- Պատրաստ Եկեղեցի մը, Սրահ մը եւ կամ Ենթ մը գնելու-

Գ- Նոր հող մը գնել եւ անոր վրայ ~~կառնել~~ Եկեղեցի-Սրահ կա-
ւարցիլ - *Ապրիլ 1950*

Այս երեք գլխաւոր հարցերու շուրջ ունեցանք քանի, քանի ժողովներ եւ բաւական ժամանակ կատարեցինք հետապնդումներ, սակայն տեսանք թէ առաջին երկու հարցերուն լուծում տալ կարելի չէր, հետեւաբար մեր միտքն ու աշխատանքները կեդրոնացուցինք երրորդ կէտին վրայ— այսինքն գտնել յարմար հող մը՝ երթեւեկութեան եւ այլ յարմարութիւններով՝ ու հոն կառուցել մեր ծրագրած Եկեղեցւոյ—Սրահի շինութիւնը։ Առանց ժամանակ կորսնցնելու նայեցանք զանազան հողեր՝ որ վաճառքի հանուած էին տարբեր կալուածավաճառներու կողմէ եւ վերջապէս բախտը ունեցանք 3901 Վեսթ Կրէյսի անկիւնը գտնել 150—ով 130 ոտք տարածութեամբ հողամասը՝ մեր բոլոր սպասած յարմարութիւններով։ Նկատի ունենալով ժամանակի կարճութիւնը եւ Ռիլ Սթեյթի մարդոց աճապարանքի մէջ ըլլալը, յարմար դատեցինք կարելի եղածին չափ շուտ Հոգաբարձութեան հետ խառն ժողով մը ունենալ եւ այդ ուղղութեամբ գործնական քայլ առնել։

Փետրուար 23, 1949—ին Պր—Մանուէլ Տէրտէրեանի բնակարանին մէջ տեղի ունեցաւ Հոգաբարձութեան եւ Յանձնախումբիս առաջին խառն ժողովը։ Այս ժողովին մենք մանրամասն տեղեկութիւն տուինք խնդրոյ առարկա հողի մասին, սակայն Հոգաբարձութիւնը վայրին բոլորովին անճանօթ ըլլալով՝ յարմար տեսաւ Փետրուար 27—ի Կիրակին հաւաքաբար երթալ եւ հողը տեսնել եւ ըստ այնմ որոշում տալ։ Այդպէս ալ եղաւ, ի բաց առեալ Պր—Յարութիւն Տիրատուրեանէ, թէ Հոգաբարձութեան եւ թէ Յանձնախումբիս ամբողջ կազմը նշանակուած օրը հաւաքուեցան յիշեալ հողի վրա։ Ունեցանք կարճ խորհրդակցութիւն եւ հարցը իր մանրամասնութեան մէջ վեր առնելով միասնաբար անցուցինք հետեւեալ խիստ կարեւոր որոշումները—

- Ա— Նկատի ունենալով Հոգաբարձութեան տրամադրութեան տակ եղող այտըլ—վուտ էվընիւի վրայ գտնուող հողի եկեղեցիքս եւ կամ Սրահ մը շինելու անյարմարութիւնները՝ կորոշէ այդ հողի վրայ ոչ Եկեղեցի եւ ոչ ալ սրահ շինել։
- Բ— Նկատի ունենալով՝ որ 3901 Վեսթ Կրէյս—ի վրայի հողը թէ Եկեղեցւոյ եւ թէ Սրահի շինութեան համար ամէն յարմարութիւն ունի եւ գինն ալ նպաստաւոր է՝ կորոշէ այդ հողը գնել եւ առանց ժամանակ կորսնցնելու շինութեան գործի անցնիլ։

Գ— Նկատի ունենալով՝ որ տուեալ պայմաններու տակ Այտըլվուտ էվընիւի վրայ եղող Հոգաբարձութեան հողին այլեւս պէտք չկայ՝ կորոշէ անմիջապէս վաճառքի հանել եւ կարելի եղածին չափ նպաստաւոր գնով մը ծախել։

Հոգաբարձութեան եւ Յանձնախումբիս անդամները բոլորն ալ ստորագրեցին այս պաշտօնական որոշումը ի ներկայութեան Պրնք— Խաչատուր Շահինեանի եւ Հայկ Երամեանի, որոնք նոյնպէս ստորագրեցին պաշտօնական գրութիւնը՝ որպէս վկաներ։

Այս մեր կատարելիք հսկայ աշխատանքի նախաքայլն էր: Յանձնախումբս առանց ժամանակ կորսնցնելու դիմում կատարեց Հողը ծախող ընկերությունն եւ ստացաւ մանրամասն տեղե-
թութիւն Հողը գնելու համար:

Մենք օրը-օրին տեղեկագրեցինք Գերաշնորհ Սրբազան Հօր եւ անոր հրահանգով
երկրորդ քայլը առիթ առնելու պատրաստակամութեամբ: Անմիջապէս ժողովի հրաւիրե-
ցինք Թէ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը եւ Թէ Աւանդապահ Յանձնախումբը՝ մեզ հետ
խառն ժողով ունենալու համար:

Այս խառն ժողովը տեղի ունեցաւ Մարտ 22, 1949-ին՝ Պր- Գրիգոր Մակարեանի
բնակարանը: Հոգաբարձութեան, Աւանդապահ Յանձնախումբի եւ Եինութեան Յանձնախումբի
բոլոր անդամներու ներկայութեան Հողի գնման հարցը վեր առնելով մտքերու փոխանա-
կումէ վերջ որոշուեցաւ 1000 տոլար կանխավճար ընել 3000 տոլար արժող Հողի վրայ:
Հոգաբարձութիւնը պաշտօնապէս յանձնեց 350 տոլարնոց չէք մը Աւանդապահ Յանձնախում-
բին, անոնք իրենց կարգին այդ գումարի վրայ 650 տոլար աւելցնելով՝ յաջորդ օրն
իսկ 1000 տոլարնոց չէք մը յանձնեցին Յանձնախումբիս:

Մենք այդ չէքը նոյնութեամբ յանձնեցինք Հողը վաճառող ընկերութեան որպէս
կանխավճար եւ այդպէսով կապեցինք Հողի գնումը:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ

Երկրորդ յաջող քայլը առնուած էր- անհրաժեշտ էր խիստ կենսական յաջորդ քայլը առ-
նել: Այդպէս ալ եղաւ: Գերաշնորհ Տիրան Սրբազանի հետ հաղորդակցելով որոշուեցաւ
Եկեղեցւոյ-Սրահի շինութեան պաշտօնական հանգանակութիւնը բանալ Յունիս 12-ի Կի-
րակին: Մինչ այդ՝ Յանձնախումբս ձեռք ձգելով խիստ վստահելի եւ Եկեղեցի շինելու
գործին լաւատեղեակ ճարտարագէտ մը ունեցաւ անոր հետ շարունակական խորհրդակցու-
թիւններ եւ զանազան նոր կառուցուող եւ կառուցուած եկեղեցիներու այցելութիւններ
եւ յետոյ պատրաստել տուաւ մեր նկատի ունեցած Եկեղեցի-Սրահի յատակագիծը՝ իր ման-
րամասնութիւններով:

Եւ վերջապէս, Յունիս 12, 1949-ի Կիրակի Կ-վ- ժամը 7-ին, ճան Մարշըլ
Պանդոկին մէջ Եկեղեցւոյ-Սրահի Եինութեան Հանգանակութեան Պաշտօնական Բացումը
տեղի ունեցաւ:

Հոս ցաւով կարճանագրենք, որ Թէ Ռիչմընտի եւ Թէ Հօփվելի բարեպաշտ հասա-

րակութեան Հոծ մեծամասնութիւնը իր բացակայութեամբ կը փայլէր՝ չը գիտենք ինչ---ինչ---պատճառներով:

Այսպիսի նուիրական եւ գերազոյն նպատակի մը համար կանչուած ժողովին ներկայ էին միայն եւ միայն 57 հոգի՝ մէջն ըլլալով Գերաշնորհ Սրբազան Հայրն ու իր օգնական Սարկավարդ Հրանդ Առաքելեան:

Ներկաներէն 18 հոգի միայն մասնակցեցան խոստումներու Հանգանակութեան՝ որոնք 8-ը անդամներ էին Հոգաբարձութեան եւ Յանձնախումբիս՝ որոնք նախապէս իրենց խոստումները յայտնած էին Սրբազան Հօր: Այդ օրուայ եղած խոստումներու ընդհանուր գումարն էր 3200 տոլար՝ մէջն ըլլալով տեղւոյս էթ-ճի-Պի-ԵՈՒ-ի պայմանադրական 150 տոլարը:

Հանգանակութեան այսպիսի ձախող պաշտօնական բացումը որոշ չափով յուսալքութիւն առաջացուց թէ Հոգաբարձութեան եւ թէ Ելիսիական Յանձնախումբի անդամներու մէջ- սակայն մենք այդ հարեածը կրելով հետ մէկտեղ՝ առանց յուսահատելու ծրարեցինք մեր յաջորդական կատարելիք աշխատանքները:

Գերաշնորհ Սրբազան Հօր ներկայութենէն օգտուելով՝ յաջորդ օրն իսկ ըսկսանք Հանգանակութեան խոստումները ապահովելու գործը շարունակել: Այցեկեցինք զանազան անձնաւորութեանց թէ Յունիս 12-ին եւ թէ Յունիս 14-ին: Եւ պէտք է ըսել, որ Հանգանակութեան բացման ներկա չեղող անձնաւորութիւններ ալ աւելի մեծ գումարներով իրենց խոստումը ըրին: Երկու օրուայ այցելութեանց ընթացքին առնուած խոստումներու գումարը հասաւ 3113 տոլարի՝ մէջն ըլլալով Աթ-էթ-էն Միութեան 213 տոլարի գումարը՝ որ կը գտնուի Տիկ-Մէրի Տէրվիշեանի տրամադրութեան տակ:

Հանգանակութեան գործը յուսադրիչ կերպարանք ստացաւ երբ տեսանք թէ խոստումներու ընդհանուր գումարը հասաւ 6338 տոլարի՝ մինչեւ Յունիս 15-ը: Սակայն պէտք է ընդունիլ որ այդ օրէն մինչեւ Յունիս 7-1949-ը նոր խոստումներ ապահովելու աշխատանք չի կատարուեցաւ՝ ինչու որ թէ Հոգաբարձութիւնը եւ թէ Յանձնախումբս յարմար տեսաւ այդ աշխատանքը Եկեղեցական Առաջնորդի մը հետ կատարել՝ ալ աւելի արդիւնաւոր դարձնելու համար: Այդպէս ալ եղաւ- առանց ժամանակ կորսնցնելու գրեցինք Սրբազան Հօր՝ եւ իր հրահանգով դիմում կատարեցինք Հոգեշնորհ Տէր Թորգոմ Վարդապետ Մանուկեանի՝ որ այցելէ զաղուծս՝ գէթ մէկ

շարժումով՝ այդ աշխատանքը մեզ հետ կատարելու համար:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՒ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ճիշդ է թէ մենք նոր հողը գնելու եւ չին հողը վաճառելու համար որոշ աշխատանքներ կատարած էինք Սրբազան Հօր դիտակցութեամբ, սակայն երկու ուղղութեամբ ալ վերջնական քայլ առնելու համար անհրաժեշտ էր Եկեղեցւոյ Անդամական ժողով ունենալ եւ այդ մասին որոշում անցնել:

Օգտուելով Հոգեշնորհ Թորգոմ Վարդապետի Օգոստոս 3-ի այցելութենէն, մեր փաստաբանի հրահանգով եւ մեր ծրագիր կանոնադրի որոշ յօդուածներու համաձայն, անդամական ժողովի հրաւիրեցինք Գաղութիս Եկեղեցւոյ անդամները Օգոստոս 7, 1949-ին Յանձնախումբս իր համառօտ զեկոյցը տուաւ կատարուած եւ կատարուելիք գործերու նկատմամբ եւ թէ չին հողի եւ նոր հողի մասին: Անդամական ժողովին ներկա եղող 33 անդամներէն 30-ը քուէարկեցին թէ չին հողը ծախել եւ թէ նոր հողը գնել:

Այդ օրն իսկ, երեկոյեան խոն ժողով տեղի ունեցանք Հայր Սուրբի ներկայութեան՝ Պր- Գրիգոր Գրիգորեանի բնակարանը: Պատրաստուեցաւ յառաջիկային կատարուելիք աշխատանքներու ընդհանուր ծրագիր:

Հոս տեղին է յիշել խիստ կարեւոր պարագայ մը, այն է թէ, մեր սկսած Եկեղեցւոյ-Սրահի Ծինութեան հանգանակութիւնը իսկապէս բացուեցաւ այդ գիշերը՝ Օգոստոս 7, 1949-ին: Ինչու որ ներկա եղող թէ Հոգաբարձութեան եւ թէ Յանձնախումբիս անդամները իրենց նախապէս ըրած խոստումներու լրիւ եւ կամ մասնակի վճարումը ըրին, որ կը ներկայացնէր հետեւեալ պատկերը-

	ԽՈՍՏՈՒՄ	ՎՃԱՐՄՑ
Գրիգոր Մակարեան	400-00	200-00
Համբարձում Հայվաճեան	100-00	100-00
Նշան Շահինեան	500-00	300-00
Յարութիւն Տարխանեան	300-00	200-00
Գրիգոր Գրիգորեան	300-00	200-00
Մանուէլ Տէրտէրեան	100-00	100-00
Նշան Բուստիկեան	50-00	50-00
Վահան Ղազարեան	200-00	200-00
	<u>1950-00</u>	<u>1350-00</u>

Հոգաբարձութեան անդամներու եւ Յանձնախումբիս առած այս գովելի քայլը իր լաւ արդիւնքը ցոյց տուաւ: Անոնց օրինակին հետեւեցան ուրիշներ եւ իրենց պարտքը կատարեցին լրիւ կամ մասնակի կերպով, որը կարելիութիւն ստեղծեց

Յանձնախումբիս՝ որ առանց դժուարութեանց մտնելու նոր հողի մնացեալ 2000 տո-
լարի վճարումը ըրաւ: Հոս յիշենք այն պարտաճանաչ անձնաւորութեանց անունները՝
որ վերը յիշատակեցինք՝

	<u>ԽՈՍՏՈՒՄ</u>	<u>ՎՃԱՐԵՑ</u>
Պր- Գասպար Կարապետեան	300-00	100-00
Պր- Ստեփան Պետուշեան	200-00	200-00
Պր- Զալի Աշճեան	150-00	150-00
Տիկ- Աննա Տէր Գրիգորեան	50-00	50-00
Պր- Խորէն Պանտազեան	100-00	50-00
Պր- Մայր Կիրակոսեան	200-00	50-00
	<u>1 000-00</u>	<u>600-00</u>

Այսպէս, մինչեւ այս օր, Հանգանակութեան իրենց դրական մասնակցութիւնը բերած
են վերոյիշեալ 14 անձնաւորութիւնները՝ որոնք մասնաւոր պատիւի արժանի են:
Ուստի, որոշապէս կրնանք ըսել թէ մինչ այս թուականս, Հանգանակուած է ճիշդ
եւ ճիշդ 1950 տոլար:

Հոգեշնորհ Տէր Թորգոմ Վարդապետ Մանուկեանի Օգոստոս 3-ի այցելութենէն լաւա-
զոյնս օգտուելու միտումով՝ մենք կատարեցինք ծրագրուած աշխատանք՝ իր առաջնոր-
դութեամբ: Հայր Սուրբը մեզ հետ այցելեց մօտ 30 զանազան անձնաւորութեանց՝
Հոփվելի եւ Ռիչմընտի մէջ եւ 26 անձերէ ստացաւ որոշ խոստումներ՝ որոնց գու-
մարը հասաւ 2870 տոլարի՝ մէջը ըլլալով Դպրաց Դասի 500 տոլարի պաշտօնական
խոստումը: Այսպէսով խոստումներու ընդհանուր գումարը հասաւ 9208 տոլարի:
Ճիշդը ըսելով, մեզ համար բառեր կը պակսին զնահատելու համար Գերաշնորհ Տէր
Թորգոմ Վարդապետի կատարած ԼԱԻ աշխատանքը՝ Օգոստոս 3-ի այցելութեան առթիւ:
Հայր Սուրբը այդ հինգ օրուայ ընթացքին այնպիսի մեղուաշան աշխատանք կատարեց
եւ մեր բոլոր ուժերը կազմաւորեց՝ որ անսահմանօրէն դիւրացուցած եղաւ մեր
Եկեղեցւոյ-Սրահի Շինութեան համար սկսուած Հանգանակութեան գործը: Եւ այդ
աշխատանքը ՄԵԾ գնահատականի արժանի է: Պէտք է համեստ ըլլալու համար խոստովա-
նինք, որ մենք ինչ որ կսպասէինք Հայր Սուրբէն՝ այցելութենէն՝ տասնապատիկն
անգամ աւելի օգուտ ստացանք, հակառակ անոր որ մենք զինք պէտք եղած կերպով
գոհ չի ձգեցինք:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԿԸ ԴԱՆԴԱՂԻ

Հակառակ անոր որ մենք որոշ յաջողութիւններ ձեռք ձգեցինք Հայր Սուրբի այցե-
լութեամբ, բայց եւ այնպէս, իր մեկնելէն վերջ մեր գործերը գործունէութեան

մէջ ըրող Թուրքիան առաջացաւ: Հոգաբարձութեան եւ Յանձնախումբիս կատարած
 այցելութիւններէն ապահովեցինք միայն եւ միայն 900 տուարի խոստում եւ այդ-
 պէսով ընդհանուր գումարը հասցուցինք 10,108-00 տուարի- եւ երբ Հոգեշնորհ
 Տէր Թորգոմ Վարդապետ դարձեալ այցելեց գաղութս Սեպտեմբեր 25, 1949-ին՝ մենք
 տուինք այդ ուղղութեամբ զեկոյց՝ որ այնքան ալ գովելի չէր:

Վերաքննելով մեր կատարած աշխատանքները եւ ապագային կատարուելիք
 գործերը՝ Սեպտեմբեր 25-ին Հոգաբարձութեան հետ ^{ուսեցած մեր խառն ժողովին մէջ՝} ~~գործեալ-խառն-ժողով-ուսեցած~~
 որուն ներկա էր Հայր Սուրբը, պատրաստեցինք աշխատանքի նոր ծրագիր՝ խոստումնե-
 րը փանձելու համար: Հոգաբարձութեան եւ Յանձնախումբիս անդամները գրեթէ միաձայ-
 նութեամբ ընդունեցին իրենց խոստումներու մնացեալ վճարումները ընել եւ յետոյ
 ժողովուրդին գիմում կատարել- սակայն ղժբախտաբար թէ որոշումը եւ թէ կատարուե-
 լիք աշխատանքը մնաց Թուրքի վրայ երկար ժամանակ՝ մինչեւ Նոյ- 29, 1949-ի խառն
 ժողովին: Այս ժողովի մէջ մեծամասնութեան ձայնով բեկանուեցաւ նախորդ ժողովի
 գլխաւոր որոշումը՝ եւ ծրագրուեցաւ աշխատանքի նոր ծրագիր: Այդ օրուայ որոշումը
 ալ մնաց Թուրքի վրայ եւ աշխատանք բնաւ չի կատարուեցաւ՝ նկատի ունենալով թէ
 իրար յաջորդող Տօնական օրերը եւ թէ մօտիկ ապագային Սրբազան Հօր այցելութիւնը:
 Եւ այդպէսով, թէ Հոգաբարձութիւնը եւ թէ Յանձնախումբս բնաւ աշխատանք չի կատա-
 րեց Սեպտեմբեր 25, 1949-էն ի վեր՝ ի բաց առեալ Հին հողի վաճառումն ու նոր հող
 գնուեալ: զնման աշխատանքը:

Մեր Դժոխարձութեանց Գլխաւոր Պահանջները

Մինչեւ այն ատեն որ Հոգաբարձութեան անդամներու եւ Յանձնախումբիս միջեւ միաս-
 նականութիւն գոյութիւն ունէր՝ գործերը ընթացան խաղաղ կերպով եւ արդիւնքը եղա
 նպաստաւոր մեր նպատակի համար- սակայն այն օրէն երբ հիմնական խնդիրներու շուր-
 տարակարծութիւն ծագեցաւ՝ մեր գործերը սկսան դանդաղիլ եւ վերջի վերջոյ բոլորո-
 վին կանգ առնել:

Մենք կը նշմարենք թէ վախ եւ թէ Թերահաւատութիւն գործի յաջողութեան նը-
 կատմամբ: Տակաւին այս կարեւոր աշխատանքը գլխաւորող անդամներէն ոմանք չեն հա-
 մոզուած թէ այս գործը կարելի է յաջողցնել- եւ կը խորհին թէ իրենց նիւթական
 եւ բարոյական օժանդակութիւնը պարապը պիտի երթա: Եւ այսպիսի մտայնութիւն շատ
 որոշ էր որ գործին զգալիօրէն պիտի վնասէր ու անդամներու մէջ յուսալքութիւն,

յոռեանստեղծիւն եւ թուլութիւն տարածէր:

Յաւալի իրականութիւն է որ այսօր ճեղքւացք գոյութիւն ունի Հոգարար-
ձութեան եւ Յանձնախումբի կարգ մը անդամներու միջեւ- եւ այս ալ ինքնին իր
հաւասար աւերը կը կտարէ- այդ իսկ պատճառաւ ներկայից գործը գլխաւորող ու-
ժերը միատարր չեն եւ իրենց միջեւ միասնականութիւն գոյութիւն չունի: Այսպի-
սի հասարարական գործերու մէջ խիստ կարեւոր եւ այժմէական է որ գործը գըլ-
խաւորող անձնաւորութիւններ գէթ սկզբունքային խնդիրներու շուրջ տարակարծու-
թիւն չունենան եւ համերաշխ աշխատանք առաջ տանին՝ մէկ կողմ ձգելով անհատական
գձուձ հաշիւներ եւ փարելով միայն եւ միայն ԿՃՏ ՆՊԱՏԱԿԻՆ:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Պէտք է որ սրտբաց խօսինք, մեր սխալները ընդունելու քաջութիւնը ունենանք եւ
մեր շինիչ քննադատութիւնները անկեղծօրէն ընենք հոս՝ փոխանակ պատերու տակ
բամբասանքներ ընելու եւ փսփուքային աշխատանք առաջ տանելու: Պէտք է միշտ
ի մտի ունենալ ԳԵՐԱԳՈՅՆ ՆՊԱՏԱԿԸ եւ խօսիլ ու գործել մի միայն ի նպաստ այդ
ՎԵՋ նպատակի իրագործման:

Մենք վեց ամիս առաջ ալ աւելի նպաստաւոր պայմաններու տակ կը գտնուէ-
ինք եւ ալ աւելի պատեհութիւն ունէինք սկսուած գործը յաջողութիւն դարձնելու
քան թէ հիմա- այնպէս որ պէտք է կրկնապատիկ ջանք թափենք եւ կրկնապատիկ զոհա-
բերութիւն ընենք՝ եթէ անկեղծօրէն կռւենք որ այս սկսուած գործը յաջողութեամբ
պսակուի: Եթէ այս ընելու վճռականութիւնը մեր մէջ կը պակսի եւ եթէ գոյութիւն
ունեցող ախտաւոր հիւանդութիւնը պիտի շարունակուի եւ պիտի քալենք միեւնոյն
ճամբով՝ լաւ է որ այս օր մի անգամ ընդ միշտ հեռանանք այս աշխատանքէն եւ
Եկեղեցի-Սրահի շինութեան վրայէն ՍԵՒ ԽԱԶ ՄԸ ՔԱՇԵՆՔ-----

Փետրուար 19, 1950
Ռիչմընտ, Վերձիսիա